# ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄՈՒՄ ՕԾՎԵՑ ՏԱՇԻՐԻ ՇՐՋԱՆԻ ՄԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ՄԱՐԻԱՄ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հոկտեմբերի 8-ին Գուգարաց թեմում, հանդիսապետությամբ Գուգարաց թեմի բարեխնամ առաջնորդ Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի, կատարվեց Տաշիրի շրջանի Մարչապետ գյուղի Ս. Մարիամ Աստվածածին եկեղեցու օծման արարողությունը: Ձեռամբ Սրբազան Հոր և մասնակցությամբ քահանայից դասի օծվեցին եկեղեցու Սուրբ Սեղանը, Մկրտության Սուրբ Ավազանը և սյուները: Արարողության ավարտին նորաօծ եկեղեցում անդրանիկ Սուրբ Պատարագը մատուցեց Ստեփանավանի հոգևոր հովիվ Տ. Վռամ աբեղա Ղազարյանը:

Լոռու մարզի Մարչապետ գյուղի հավատացյալ ժողովրդի համար հոկտեմբերի 8-ը նվիրական և պատմական էր: Հարյուրավոր փաշիրցիներ և հարակից գյուղերի հավատացյալներ էին եկել մասնակից դառնալու եկեղեցու օծման արարողությանը, որի ավարտին թեմակալ առաջնորդն Ամենայն Հայոց Հայրապետ Գարեգին Բ Կաթողիկոսի և իր անունից օրհնության և շնորհավորանքի խոսքեր ուղղեց ներկաներին. *«Գոհություն ենք հայտնում Բարձրյալն Աստծուն, որ մեր թեմում ևս մեկ աղոթքի տուն օրհնվեց և օծվեց: Շնորհիվ Ազատ և Անահիտ Մարտիրոսյանների Մարչապետ գյուղն ունեցավ իր հավատքի տունը, ուր մեծ ու փոքր կանգնած ենք փառաբանելու մեր Տիրոջը և հայցելու Նրա անբավ ողորմությունը: Միրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, աչքի լույսի պես պետք է պահենք ու պահպանենք Աստծո տունն ու մեր հայրերի հավատքը: Այսուհետ ձեր արտաքուխ ու մաքուր աղոթքները, որ կմատուցվեն այս սուրբ տաճարում, թող նվիրվեն հանուն մեր Սուրբ Եկեղեցու անսասանության, մեր անկախ Հայրենիքի բարգավաճման ու հայ ժողովրդի բարօրության: Հիշեք նաև, որ մենք մեր աղոթքներով ու գործողությունների միասնականությամբ անպարտելի ենք եղել, երբ հավաքվել ենք մեր Մայր Եկեղեցու հովանու ներքո...»:*

Եկեղեցին կառուցվել է բարերարությամբ ռուսաստանաբնակ մարչապետցի Ազատ և Անահիտ Մարտիրոսյանների, որոնց որպես գնահատանք թեմակալ առաջնորդը նվիրեց մի սրբանկար:

Սրբազան արարողությանը ներկա էին թեմի հոգևոր դասը, Լոռու մարզպետ Հենրիկ Քոչինյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, Ստեփանավան և Տաշիր քաղաքների քաղաքապետերը, գյուղապետեր, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ և մեծ թվով հյուրեր:

Ս. Պատարագի ավարտին տեղի ունեցավ մկրտության արարողություն և բարերարի կողմից ներկաներին բաշխվեց ավանդական մատաղը՝ ի արևշատություն գյուղացիների, անսասանություն հարազատ գյուղի և ի պայծառություն Սուրբ Եկեղեցու:

*ԴԻՎԱՆ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ*